ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 59

ՎԻՈԼԵՏԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել Վիոլետա Յուրիի Գաբրիելյանին իրեն սեփականության իրավունքով պատկանող 2.18 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի (սեփականության վկայական N 20082018-07-0035, ծածկագիր 07-054-0327-0002) վրա կատարել հողային, մասնավորապես հողահարթեցման և քարահավաքման աշխատանքներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2018 թ. սեպտեմբերի 03
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 60

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ԴՌԱՆ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Գաբրիել Ալեքսանդրի Մելիքսեթյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 3-րդ փողոց թիվ 41 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (սեփականության վկայական N 17122015-07-0013, ծածկագիր 07-054-023-0021) 2016-2017 թվականներին ինքնակամ կառուցված շինությունները և ինքնակամ ձևափոխված մեկ դուռը և մեկ պատուհանը: Համայնքի էլեկտրոնային քարտեզից, որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինությունների հատակագծերից և տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Գաբրիել Ալեքսանդրի Մելիքսեթյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 3-րդ փողոց թիվ 41 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2016-2017 թվականներին ինքնակամ կառուցվել է 215.2 քմ մակերեսով բնակելի տուն, 73.0 քմ մակերեսով ավտոտնակ, 14.2 քմ մակերեսով հենապատ, աստիճաններ և 15.3 քմ մակերեսով պարիսպ, ինչպես նաև առկա է ինքնակամ բացված մեկ պատուհան և մեկ դուռ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1; 9; 10; 11; 13 և 18-րդ կետի «դ» ենթակետի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինությունների հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ բացված դռան, պատուհանի և ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

որոշում եմ.

1. Գաբրիել Ալեքսանդրի Մելիքսեթյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 3-րդ փողոց թիվ 41 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության հողամասում«ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ» ՍՊԸ-ի կողմից 28.08.2018 թվականին տրված հատակագծերի համաձայն (կցվում են) ինքնակամ կառուցված 215.2 քմ մակերեսով բնակելի տունը, 73.0 քմ մակերեսով ավտոտնակը, 14.2 քմ մակերեսով հենապատը, աստիճանները և 15.3 քմ մակերեսով պարիսպը, ինքնակամ ձևափոխված մեկ պատուհանը և մեկ դուռը համարել օրինական:
2. Պարտավորեցնել Գաբրիել Ալեքսանդրի Մելիքսեթյանին ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ բացված մեկ դռան և մեկ պատուհանի օրինականացման համար համայնքային

բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել համապատասխանաբար 559520 (հինգ հարյուր հիսուն ինն հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ, 159900 (մեկ հարյուր հիսուն ինն հազար ինն հարյուր) ՀՀ դրամ և 5200 (հինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. սեպտեմբերի 03
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 61

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Գեորգի Մովսեսի Սարգսյանի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Գեորգի Մովսեսի Սարգսյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 13-րդ փողոց թիվ 3 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (սեփականության վկայական N 13062018-07-0065, ծածկագիր 07-054-0005-0012) բնակելի տան կառուցման և հողամասի պարսպապատման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել Գեորգի Մովսեսի Սարգսյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. սեպտեմբերի 04
գ.Պտղնի